

Աստրախանի հայոց արհեստական դպրոցը բաց-
 ւեց 1877 թ. աղքատաց հոգաբարձութեան ձեռքով,
 որ պիտի պահպանուէր Միքայէլ Սահարբեկեանի կտա-
 կած գումարի (22 հազար և դպրոցական շինութիւնը)
 տօկոսներով, սակայն այդ տօկոսները բաւական չէին
 ուսումնարանի պահպանութեան համար, ուստի հոգա-
 բարձութիւնը ստիպուած էր իւր միջոցներից տարէց-
 տարի ծախսել հաւասարաչափ գումար:

Աշակերտները գիրչերօթիկ էին: Թէև նրանց նօր-
 ման 12 էր, բայց նրանց թիւը հասնում էր մինչև
 18 ի, ընդունուած էին նաև երթևեկներ: Դպրոցը
 ունէր հինգամեայ դասընթացք, առարկաները աւանդ-
 ւում էին ուսէրէն. հայերէն դասերի թիւը շարա-
 թական 6 էր:

Սկզբում արհեստներից անցնում էին հիւանու-
 թիւն և կօշկակարութիւն, բայց շուտով վերջին
 արհեստը վերացւեց սովորողների բացակայութեան
 պատճառով: (Աշակերտները ազատ էին մէկ կամ
 միւս արհեստը ընտրելու):

Տարիների փորձը ցոյց տւեց 1) որ դպրոցը
 աւարտող 14—16 տարեկան պատանիները անցնելով
 արհեստի մի տարեկան դասընթացք, անկարող են
 անկախ արհեստաւորներ դառնալ և 2) աւարտողների
 մեծամասնութիւնը կամ նորից մտնում էր Աղարաբ-
 եան դպրոց և կամ ուղղակի ընտրումէր իւր համար
 վտճառականական ասպարէզ, որ աւելի լաւ է վար-
 ձատրում Աստրախանում քան հիւանութիւնը և 3)
 մանողների թիւը խիստ նւազեց:

Աչքի առաջ ունենալով վերոյիշեալ պատճառնե-
 րը, հոգաբարձութիւնը 1907 թ.ին արհեստը բոլո-
 րովին վերացրեց, իսկ ուսման դասընթացք անցնելու
 համար աշակերտներին սկսեց ուղարկել Աղարաբեան
 դպրոց և այս դրութիւնը շարունակուած է մինչև
 այժմ: Այնպէս որ արհեստաւորների դպրոցը փոխեց
 պանսիօնի: